



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

N 1053-Ա/2

«02» հուլիսի, 2021 թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 28-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ  
ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԲՀ ԳՏՊԿ - 2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 5-ի N 483-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 26-ի նիստի արձանագրությունը և Գիտատեխնիկական համագործակցության հարցերով հայ-բելառուսական համատեղ հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 28-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 18-ի N 28-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Բելառուսի Հանրապետության

գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից անցկացվող կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ-2021» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական ծրագրերի ֆինանսավորումը սկսել 2021 թվականի հուլիս ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

**ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**

/պաշտոնակատար/

**ՑԱՆԿ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 28-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ**

Հ/հ	Ծածկագիր	Վերնագիր	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
<b>Բնական գիտություններ</b>				
1	21SC-RBSCST-1F004	Համակարգչային սկրինինգի, մոլեկուլային մոդելավորման և կենսաքիմիական վերլուծության տեխնոլոգիաների կիրառումը կորոնավիրուսային վարակի բուժման նոր պոտենցիալ պատրաստուկների մշակման համար	Կարալյան Զավեն Ալեքսանդրի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	21SC-RBSCST-1F011	Մոդիֆիկացված նանոմասնիկների և 5-ֆտորուրացիլի համակցված ազդեցության վերլուծությունը Քրոքերի սարկոմայի և ռաբդոմիոսարկոմայի աճի և զարգացման վրա	Կիրակոսյան Գայանե Ռաֆայելի	ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
3	21SC-RBSCST-1F001	Քաղցկեղային և բակտերիալ բջիջներին դեղամիջոցների թիրախային առաքումը լեկտին պարունակող տրանսպորտային համակարգերի միջոցով	Գասպարյան Վարդան Կառլենի	ՀՀ ԳԱԱ «Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
<b>Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ</b>				
4	21SC-RBSCST-2B002	Բարձր արդյունավետությամբ արևային էլեմենտների համար «բարդ օքսիդային թաղանթներ - սև սիլիցիում» տանդեմների մշակում և հատկությունների հետազոտում	Այվազյան Գագիկ Երջանիկի	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
5	21SC-RBSCST-2B005	p-InSb-n-CdTe հետերոկառուցվածքի հիման վրա քառատարր կոորդինատագայուն ինֆրակարմիր ֆոտոդետեկտորի ստեղծում և բնութագրերի ուսումնասիրում	Պետրոսյան Ստեփան Գրիգորի	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
6	21SC-RBSCST-2J012	Տերահերցային ֆոտոնիկայի կառավարվող տարրերի նոր սերունդ՝ գրաֆեն-հեղուկ բյուրեղ կառուցվածքների հիման վրա	Հովհաննիսյան Դավիթ Լևոնի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ